

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ֆրանսիական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ
ինստիտուտի հայցորդ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԵՐՈՒՄ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հետագա շարադրանքում ՍՊԸ), ինչպես նաև քաղաքացիական իրավունքի մնացած բոլոր սուբյեկտների մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերություններին պայմանավորված է նրանց իրավասությեկտությամբ։ Քաղաքացիական իսպահարաբերություններում իրավասությեկտությունը ՍՊԸ-ների՝ որպես լիիրավ մասնակիցների իրավական կարգավիճակը սահմանող հիմնական իրավական ինստիտուտն է։ Իրավասությեկտությունը, որպես իրավաբանական կատեգորիա, իր հաստատուն տեղում է գտնել քաղաքացիական իրավունքում։ Այն գործունեության իրավական հիմք է հանդիսանում առևտրային բոլոր կազմակերպությունների, այդ բվում՝ ՍՊԸ-ների համար։ Ըստ Ն. Ի. Մատուցովի. «ԽՍՀՄ-ի օրոք իրավասությեկտությունը, որպես այդպիսին, խորապես և բազմակողմանիորեն ուսումնասիրվել է ֆիզիկական անձանց շրջանակներում, իսկ իրավաբանական անձանց իրավասությեկտությունը հազվադեպ է դարձել ուսումնասիրության հճնուրույն առարկա»։ Ներկայումս իրավասությեկտության բովանդակության վերլուծության վերաբերյալ միասնական մոտեցում մշակված չէ ոչ չ իրավունքի ընդհանուր ուսումնական և ոչ էլ իրավունքի առանձին ճյուղերի կողմից։ Գիտնականները միաբան են միայն այնքանով, որ ոչ չ չ մխսում իրավասությեկտություն կատեգորիայի գոյությունը։ Սակայն, իրավասությեկտության և դրա բովանդակության վերաբերյալ ուսումնասիրողներն ունեն որոշ տարածայնություններ։ Գիտնականների մեծ մասի կարծիքով՝ «իրավասությեկտությունը» ընդհանուր հասկացություն է, որի բաղկացուցիչներն են «իրավունակությունն» ու «գործունակությունը»։ Յա. Ռ. Վերեբսի վիճելի տեսակետի համաձայն՝ «Իրավունակությունն ու գործունակությունը ցանկացած իրավահարաբերության մեջ հանդիսանում են իրավունքների ծագման ու գոյության հիմքը, սակայն որոշ իրավահարաբերությունների մեջ իրավունքի սուբյեկտը կարող է օժտված լինել միայն իրավունակությամբ, եթե հնարավոր է լրացնել գործունակության բացակայությունը»։ Իհարկե, ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց, ապա հեղինակի հետ լիովին համաձայն ենք։ Այսպես, անգործունակ ճանաչված քաղաքացին, փաստորեն, պահպանում է

իրավունակությունը, սակայն գործունակությունը նրա փոխարեն իրականացնում է անգործունակի խնամակալը։ Սակայն, այլ է, երբ խոսքն իրավաբանական անձանց մասին է, քանզի իրավաբանական անձի կամքը ձևավորում են նրա մարմնները և ի սկզբանե հենց իրենք, այսինքն ֆիզիկական անձինք, որոնք ընտրվում կամ նշանակվում են իրավաբանական անձի գործերը կառավարելու համար իրագործում են իրավաբանական անձի գործունակությունը։ Այդ հարցի կապակցությամբ հստակ մոտեցում ունի Յու. Կ. Տոլստոյը, որի համաձայն՝ «Անձին քաղաքացիական իրավունքի սուբյեկտ ճանաչելու համար նրան անհրաժեշտ է զժուել քաղաքացիական իրավասությեկտությամբ»։ Դրա հետ մեկտեղ Օ. Ա. Կրասավչիկովն իրավացիորեն նշում է. «Իրավունակությունն ընդհանուր հիմք է, որով որոշվում են իրավունքների բնույթն ու բովանդակությունը, այն գտնվում է որոշակի սուբյեկտի տիրապետության տակ, սակայն իրավասությեկտություն հասկացությունը կազմված է երկու հիմնական տարրերից՝ իրավունակությունից և գործունակությունից»։

Ըստ մեզ՝ իրավունակություն կատեգորիան իրավաբանորեն ենթադրում է այն իրավունքների շրջանակը, որոնցով կարող են օժտվել իրավունքի կոմլեքտ սուբյեկտները, և դրա սահմանափակումը նշանակում է սուբյեկտների կողմից իրավունքների ձեռքբերման սահմանափակություն, իսկ գործունակության բացակայությունը /սահմանափակումը/ առաջ է բերում սուբյեկտների կողմից իրենց սեփական գործողություններով իրավունքների և պարտականությունների ձեռքբերման և իրականացման ամիսարինություն։

«Իրավասությեկտություն» կատեգորիան ոչ թե ընդհանրական, այլ անհատական բնույթի է։ Դրա անհատական լինելը առաջին հերթին բացատրվում է նրանով, որ իրավունքի տարրեր սուբյեկտների համար դրա բաղադրիչներն /իրավունակություն, գործունակություն/ ունեն տարրեր ծավալներ։ Այդ առումով լիովին համաձայն ենք Մ. Վ. Կրտսովի հետ, որը գրում է. «Իրավասությեկտությունը ոչ թե իրավաբանական որակների հավաքական է, որոնց ամբողջությամբ պետք է օժտված լինեն քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, այլ օրենքով սահմանված հատկանիշ, որով օժտվում են

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

առանձին սուբյեկտները քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու համար» :

Ժամանակակից քաղաքացիական իրավունքի գիտությունը իրավասուրյեկտությունը դիտում է որպես սուբյեկտի համար քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցելու սոցիալական, իրավական հնարավորություն։ Ինչպես նշում է Վ. Սնը՝ «Իրավասուրյեկտությունն իր բնույթով իրավունքի ընդհանրական տեսակ է, որն ապահովված է պետության կողմից նյութական և իրավաբնական երաշխիքներով։ Իրավասուրյեկտությունը պետության և սուբյեկտների միջև երկարատև կապի արդյունք է, և հենց այդ կապի առկայության ուժով ցանկացած իրավասուրյեկտ անձի վրա դրված են այնպիսի սկզբունքային պարտականություններ, ինչպիսիք են օրենքների պահպանումն ու քաղաքացիական իրավունքների իրականացումը՝ դրանց սոցիալական նշանակությանը համապատասխան։ Իրավունակությունը քաղաքացիական իրավունքներ ծերելու և իրականացնելու ուժով գործունակությունը՝ սուբյեկտի իրավունքն է, իսկ գործունակությունը՝ սուբյեկտի՝ սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ ծերելու և իրականացնելու ուժով համապատասխան պարտականություններ կրելու իրավունքը»։

Բացի այդ, գործունակությունը ներառում է նաև դելիկտառնակությունը, այսինքն՝ քաղաքացիական իրավախսահատումներ բոլով տարու դեպքում սուբյեկտի կողմից ինքնուրույն գույքային պատասխանատվություն կրելու ունակությունը։ Քաղաքացիական իրավունքը, իրավաբնական անձանց սոցիալ-տնտեսական կյանքի որևէ բնագավառում գործելու հնարավորություն վերապահելով, նրանց օժտում է համապատասխան քաղաքացիական իրավունքներով ու պարտականություններով։ Չի բացառվում, որ իր գործունեության իրականացման ընթացքում իրավաբնական անձի կողմից իր իրավունքների չարաշահման կամ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով վնաս պատճառի քաղաքացիներին և իրավունքի այլ սուբյեկտների։ Այդպիսի դեպքերում իրավաբնական անձը կրում է իրավախսահատման հետևանքով իրավունքի այլ սուբյեկտների պատճառված վնասի հատուցման համար պատասխանատվություն։ Ընդհանրապես, իրավաբնական անձի կողմից իրավախսահատումներն, ըստ իրենց բնույթի և ծագման հիմքերի, բաժանվում են երկու խմբի՝ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ կապված իրավախսահատումներ և իրավախսահատումներ, որոնք առաջանում են այլ սուբյեկտների պատճառված վնասի հետևանքով։ Դրան համապատասխան իրավաբնական անձի քաղաքացիական վատասխանատվությունը լինում է երկու տեսակի՝ պայմանագրային և արտապայմանագրային (դելիկտային) պատասխանատվություն։ Քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտի, այդ բայում ՍՊԸ-ի իրավաբնական պատասխանատվություն-

նը առաջանում է այն դեպքում, երբ առկա է որոշակի փաստական հանգամանքների /հիմքերի կամ պայմանների/ համակցություն, որը կոչվում է քաղաքացիական իրավախսահատման կազմ։

ՍՊԸ-ի որպես իրավունքի սուբյեկտի իրավասուրյեկտությունը քաղմարովանդակ է, քանի որ մասնակցում է տարբեր իրավահարաբերությունների։ Իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելով՝ ընկերությունը դառնում է քաղաքացիական, վարչական, ֆինանսական, աշխատանքային և այլ իրավահարաբերությունների մասնակից։ Չնայած դրան՝ ընկերության իրավասուրյեկտությունը քաղաքացիական իրավական բնույթի է, քանի որ այն ամենից առաջ քաղաքացիական կատեգորիա է, և կազմակերպությունը ստեղծվում է քաղաքացիական շրջանառությունում որոշակի պահանջներ քավարարելու նպատակով։ Այս առումով լիովին համաձայն ենք Լ. Գրոսի հետ, որի կարծիքով. «Աշխատանքային և ֆինանսական իրավունքում իրավաբանական անձի ունեցած իրավասուրյեկտությունը բխում է քաղաքացիական իրավասուրյեկտությունից»։ Խկապես, ՍՊԸ-ի ստեղծումը, դրա գործունեությունն ու դադարումը կարգավորվում են քաղաքացիական իրավունքների նորմերով։ Ընկերությունը վարչական, հարկային, աշխատանքային և այլ իրավահարաբերություններին մասնակցում է այնքանով, որքանով ճանաչվում է որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ՝ իրավաբանական անձ։ Այլ կերպ ասած՝ ՍՊԸ-ի մասնակցությունն այլ իրավահարաբերությունների ածանցյալ է նրա քաղաքացիական իրավասուրյեկտություններից։

ՍՊԸ-ի որպես իրավունքի արհեստական սուբյեկտի և ֆիզիկական անձի իրավունակության բնույթի ու բնվանդակության միջև կան եական տարրերություններ։ Այսպես, քաղաքացու իրավունակությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքը) 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունն է, որը բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես։ Այսինքն՝ քաղաքացու իրավունակությունը ցանկացած քաղաքացուն պատկանող և նրանից անօտարելի օրենկուիլ հնարավորությունն է՝ ունենալու օրենքով բույլատրելի որոշակի իրավունքներ և կրելու դրանց համապատասխան պարտականություններ այնքանով, որքանով դրանք սահմանափակված չեն օրենքներով։ Օրինակ, ըստ ՀՀ Սահմանադրության՝ սահմանադրական դատարանի անդամը և դատավորը իրավունք չունեն գրադելու ձեռնարկատիրական գործունեությամբ։ Քաղաքացու իրավունակությունն ընդունված է անվանել համապարփակ կամ ընդհանուր իրավունակություն, որի ուժով քաղաքացին կարող է իրականացնել դրա բովանդակության մեջ մտնող ցանկացած իրավունք։

Ի տարբերություն քաղաքացիների՝ ՍՊԸ-ի մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերություններին որոշակիորեն սահմանափակ է,

այսինքն՝ ունի ընդգծված սահմաններ, որոնք էլ կանխորշում են իրավաբանական անձի իրավունակության հատուկ բնույթը: ՍՊԸ-ն իր իրավունակությամբ կարող է մասնակցել միայն քաղաքացիական որոշակի իրավահարարերությունների, քանի որ կարող է ձեռք բերել ու իրականացնել միայն օրենքով սահմանված այնպիսի իրավունքներ և պարտականություններ, որոնք համապատասխանում են ընկերության կանոնադրությամբ սահմանված նրա գործունեության առարկային, բովանդակության ու բնույթին:

Իրավաբանական անձանց հատուկ իրավունակության սկզբունքն ամրագրված է Օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին կետով, որի համաձայն՝ իրավաբանական անձը կարող է ուժենալ իր հիմնադիր փաստաթղթերով նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված պարտականություններ:

«Իրավաբանական անձի իրավունակության հատուկ կամ, այլ կերպ ասած, նպատակային բնույթը պատմականորեն պայմանավորված է նրանով, որ կապիտալիզմի զարգացման նախնական փուլում կորպորացիաները ստեղծվում էին թույլտվական եղանակով: Բացի այդ իրավունքների սահմանափակումը բացատրվում է, իրավաբանական անձի արեստական բնույթով»:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունակությունը օրենսդիր իրավունքի ծնունդ են, սակայն, եթե քաղաքուն անհրաժեշտ է ընդհանուր իրավունակություն, քանի որ նա իր միանձնյա կամքով կարող է իր առջև դնել քազմատեսակ խնդիրներ և անցնել մեկից մյուսին, ապա իրավաբանական անձը ստեղծվում է մեկ կամ մի քանի անձանց կամքով, որոնք, իրավաբանական անձ ստեղծելով, իրենց առջև դնում են որոշակի նպատակների հասնելու հստակ խնդիրներ:

Ինչպես ցանկացած իրավաբանական անձի, այնպես էլ ՍՊԸ-ի իրավունակությունը հատուկ բնույթի է, այսինքն՝ նա իրավունակ է սուկ այն նպատակի շրջանակներում, որի համար ստեղծվել է: Ինչպես նշում է Վ. Ի. Մինայսկին. «Իրավաբանական անձը միշտ պետք է օժտված լինի հատուկ իրավունակությամբ, որպեսզի չիշխի ընդհանուր իրավունակությամբ օժտված ֆիզիկական անձանց»:

Իրավաբանական անձի հատուկ իրավունակության սկզբունքը իմացերատիվ կերպով սահմանված է բառականացներում, որի համաձայն՝ իրավաբանական անձն օժտված է 27-րդ հոդվածով, որի համաձայն՝ իրավաբանական անձն օժտված է քաղաքացիական իրավունակությամբ՝ իր գործունեության համար սահմանված նպատակներին համապատասխան: Այդ նույն Օրենսգրքի 50-րդ հոդվածը սահմանում էր, որ անվագեր է իրավաբանական անձի կնքած այն գործարքը, որը հակասում է նրա կանոնադրության մեջ նշված նպատակներին:

Որպես իրավունքի սուբյեկտ՝ ՍՊԸ-ն սոցիալական իրականություն է, հասարակության զար-

գացման անհրաժեշտ պայման: Սակայն հասարակական կյանքը և ինքը՝ իրավունքը, կամային գործունեությունից դուրս գրկվում են իրենց իմաստից: Մարդկանց խոմքը միավորող նպատակը հասարակական անհրաժեշտություն է և առանձնանում է այլ նպատակներից: Օրենսդիրությունը պայմանավորված և մարդկանց գիտակցությամբ ընդունված լինելով՝ այդ նպատակը դառնում է նրանց գործունեության որոշիչը, քանի որ դրան հասնելը պահանջում է կամային ջանքերի գործադրություն: Այդ պատճառով ոչ միայն մարդկանց տվյալ խմբի կամ առանձին նպատակը կամքն է որոշում իրավաբանական անձի նպատակը, այլ ինքը՝ գոյություն ունեցող նպատակն է որոշում և ուղղորդում այդ կամքի իրականացմանն ուղղված գործունեությունը:

Ուսումնասիրելով իրավաբանական անձի ընդհանուր և հատուկ իրավունակության իրավական հիմքերը՝ գիտնականներից շատերը հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ իրավունակության բովանդակությունը կազմում են ոչ թե փաստացի իրավունքներն ու պարտականությունները, այլ միայն իրավունքներ ճեղք բերելու և դրանց համապատասխան պարտականությունները կրելու սուբյեկտների հնարավորությունը: Այսինքն՝ իրավունակությունը յուրաքանչյուր սուբյեկտի համար ընդամենը իրավունքի տիրապետման անհրաժեշտ պայման է՝ սուբյեկտիվ իրավունքի անհրաժեշտ նախապայման: Այս առումով չի կարելի համաձայնել այն կարծիքի հետ, ըստ որի՝ «Իրավաբանական անձի իրավունակությունը նրա իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որոնք կազմակերպության կողմից օգտագործվում են ճեղնարկատիրական գործունեություն իրականացնելու համար»¹²: Գրեթե նույնապիս քյուրըմբոնում է պարունակում նաև Կ. Տոսունյանը, ըստ որի՝ «Լիցենզիայի հիման վրա ծագող իրավաբանական անձի իրավունակությունը հատուկ չէ, այլ լրացուցիչ, քանի որ ճեղնարկատերը իր ընդհանուր իրավունակությունը լրացնում է նոր հնարավորություններով»¹³: Քննարկվող հարցի վերաբերյալ ճիշտ դիրքորոշում ունի Գ. Թոսունյանը, ըստ որի՝ «Իրավաբանական անձի կողմից իրավունքներ ճեղք բերելու և պարտականությունները կրելու նախապայմանը նրա իրավունակությունն է»:

ՍՊԸ-ի հատուկ իրավունակության բովանդակության հստակեցումը, մեր կարծիքով, հնարավոր կդառնա օրենսդիրի կողմից օգտագործվող տերմինների պարզաբնաման միջոցով: Չաղաքացիական օրենսգրքը օգտագործում է հետևյալ տերմինները՝ «գործունեության նպատակ», «գործունեության տեսակ» /Օրենսգրքի 52-րդ հոդված/՝ «գործունեության առարկան և նպատակները» /Օրենսգրքի 55-րդ հոդված/:

Օրենսգրքի 51-րդ հոդվածում առևտրային կազմակերպությունների հիմնական նպատակը անվանվում է «շահույթ ստանալը»: Օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետում խոսվում է այն մասին, որ առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ օրենքով չարգելված գործունեության ցան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կացած «տեսակ» իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ: Դրա հետ մեկտեղ Օրենսգիրքը չի մեկնաբանում «գործունեության առարկա» տերմինի բովանդակությունը: Սակայն իրավաբանական գրականության մեջ տեսակետ կա նաև այն մասին, որ «Առևտրային իրավաբանական անձի գործունեության առարկան շահույթ հետապնդելն է»: Մեր կարծիքով, նման մոտեցումը հիմնավորված չէ, քանի որ շահույթ ստանալը ստեղծվող առևտրային կազմակերպությունների նպատակն է, քայլ ոչ երբեք գործունեության առարկան: Ինչ վերաբերում է գործունեության առարկային, ապա դա օրենքով թույլատրվող և ընկերության կամոնադրությամբ սահմանված գործունեության այն կրնկրես տեսակն է, որի իրականացման արդյունքում ընկերությունը հասնում է իր ստեղծման նպատակին, այսինքն՝ շահույթ ստանալուն: Այս առումով լիովին համաձայն ենք Կ. Պ. Կրյամիսկիին այն տեսակետին, որ. «Իրավաբանական անձի գործունեության առարկա ստեղծված է հասկանալ կամոնադրությամբ որոշակիորեն սահմանված այն գործունեության տեսակները, որոնք կազմակերպությունն իրավասու է իրականացնել»:

Չնայած Օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ առևտրային կազմակերպությունները կարող են ստեղծվել օրենքով շարգելված ցանկացած տեսակի գործունեություն իրականացնելու համար, սակայն դրա հետ մեկտեղ նշված հոդվածի 1-ին կետի շարադրանքից հետևում է, որ գործունեության կրնկրես տեսակով զբաղվելու համար ստեղծվելուց հետո առևտրային իրավաբանական անձը կարող է ունենալ միայն այդ գործունեության իրականացման համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ: Այդ մասին հստակ նշում կա նաև «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք), որի 3-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ ընկերությունն ունի օրենքով շարգելված քաղաքացիական այնպիսի իրավունքներ, որոնք անհրաժեշտ են նրա գործունեության իրականացման համար, եթե դա չի հակառակ կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկային և նպատակներին: Այլ կերպ ասած՝ ՍՊԸ-ն, որպես առևտրային իրավաբանական անձի կազմակերպահիրավական ձևերից մեկը, օժտված է հասուն իրավունակությամբ: Այսինքն՝ այն կարող է ստեղծվել օրենքով շարգելված ցանկացած տեսակի գործունեություն ծավալելու համար, այդ բվում հասուն թույլտվություն պահանջող գործունեության, սակայն կրնկրես գործունեության տեսակ (գործունեության առարկա) սահմանելով՝ իրավունք չունի զբաղվելու այլ տեսակի գործունեությամբ: Այդ կապակցությամբ հստակ դիրքորոշում ունի նաև Ե. Ա. Սոլիսանովը. «Իրավաբանական անձանց իրավունակությունը հասուն է, քանի որ ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավաբանա-

կան անձը կարող է ունենալ միայն այնպիսի քաղաքացիական իրավունքներ, որոնք համապատասխանում են օրենքով կամ կազմակերպության հիմնադիր փաստարդություն նախատեսված նրա գործունեության առարկային և կարող է կրել միայն դրանց համապատասխան պարտականություններ»: Ինչ վերաբերում է գործունեության առարկային, ապա որոշակի տեսակի գործունեություն իրականացնելու համար այն կարող է ունենալ միայն դրանց համապատասխան իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ: Օրինակ, պարենային մթերքների վաճառքով զբաղվելու և այդ գործունեությունից շահույթ ստանալու նպատակով ստեղծված ՍՊԸ-ն կարող է ձեռք բերել և իրականացնել միայն այնպիսի իրավունքներ ու կրել դրանց համապատասխան պարտականություններ, որոնք կապահովեն նրա՝ կանոնադրությամբ սահմանված գործունեության, այսինքն՝ պարենային մթերքների վաճառքի կազմակերպման ու իրականացման համար:

Իրավաբանական գրականության մեջ, մասնավորապես Ս. Ռուխտինի կարծիքով. «Լինելով լուծարման գործընթացում՝ իրավաբանական անձի իրավունակությունը, փաստորեն, դադարում է»: Ըստ մեզ՝ գործերի կառավարման լիազորությունների փոխանցումով տեղի է ունենում ընկերության կողմից տնտեսական գործունեության իրականացմանն ուղղված իրավունակության սահմանափակում, այսինքն՝ տնտեսական գործունեություն իրականացնելու համար համապատասխան իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու ու դրանց համապատասխան պարտականություններ կրելու անհնարինություն, որը սակայն չի նշանակում, թե ընկերության իրավունակությունը դադարում է: Ասկան կարելի է բացատրել հետևյալ կերպ. «Օրենսգրքի 69-րդ հոդվածը սահմանում է այն իրավունքների ծավալը, որոնցով օժտվում են լուծարման հանձնաժողովները»: Այսպես, լուծարման հանձնաժողովն իրավաբանական անձի պետական գրանցման մասին տվյալներ իրավաբանակող մասնություն հայտարարություն է գետեղում նրա լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետների մասին, միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու և դերիտորական պարտը ստանալու ուղղությամբ, պարտատերերին տեղեկացնում է իրավաբանական անձի լուծարման մասին, պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի պարտից հետո կազմում է միջանկյալ հաշվեկշիռ՝ «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վաճառում է իրավաբանական անձի գույքն այն դեպքերում, եթե լուծարվող իրավաբանական անձի դրամական միջոցները բավարար չեն պարտատերերի պահանջները բավարարելու համար (69-րդ հոդվածի 3-րդ կետ) և այլն: Այսինքն՝ լուծարվող իրավաբանական անձի կառավարման մարմինների լիազորությունները լուծարման հանձնաժողովին են փոխանցվում ոչ թե ամբողջ ծավալով, այլ միայն դրանց մի մա-

սով: Այսպես, Օրենսգրքի 99-րդ և Օրենքի 35-րդ հոդվածները նախատեսում են կառավարման բարձրագույն մարմին՝ ի դեմս հիմնադիրների ընդհանուր ժողովի, իսկ Օրենքի 43-րդ հոդվածը նախատեսում է նաև ընկերության գործադիր մարմին, որն իրականացնում է ընկերության ընթացիկ կառավարումը: Նշված հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընկերության մարմիններն իրականացնում են ընկերության կառավարումն ամբողջությամբ, այսինքն՝ որոշում են ընկերության գործունեության հիմնական ուղղությունները և իրականացնում են դրանք: Մրանից կարելի է հետևություն անել, որ ընկերության կառավարման մարմիններն /հիմնադիրների ընդհանուր ժողով, գործադիր մարմիններ/ օժտված են նաև այնպիսի իրավունքներով, որոնք ընկերության լուծարման դեպքում լուծարման հանձնաժողովին չեն փոխանցվում, օրինակ՝ ընկերության տնտեսական գործունեության հետ կապված գործարքների կնքում և այլն: Վերը նշվածին համապատասխան իրավունակությունն օրենքով նախատեսված այն իրավունքների և պարտականությունների շրջանակն է, որոնցով ամբողջությամբ կարող են օժտվել իրավունքի կոնկրետ սուրյեկտուրը: Չնայած նրան, որ ՍՊԸ-ներն ունեն հատուկ իրավունակություն՝ գործունեության կոնկրետ տեսակի ընտրելով՝ կարող են ձեռք բերել և իրականացնել այդ գործունեության ուղղված ցանկացած տեսակի քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ: Մինչդեռ լուծարման հանձնաժողովին այդ նույն իրավունքները փոխանցվում են սահմանափակ ծավալով, ինչից էլ կարելի է հետևություն անել, որ ընկերության լուծարման ժամանակ կառավարման լիազորություններն ընկերության լուծարման հանձնաժողովին փոխանցվելու դեպքում ընկերության իրավունակությունն օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում սահմանափակվում է: Այսինքն՝ ընկերությունն իր իրավունակությունը, թեկուղ սահմանափակ ծավալով, այնուհանդերձ պահպանում է (օրինակ, սեփականության իրավունքը և այլն):

Հայտնի է, որ իրավասուրյեկտությունն իր մեջ ներառում է իրավունակությունն ու գործունակությունը: Ֆիկցիայի տեսության կողմնակիցները (օրինակ՝ ֆ. Կ. Սավինյի) պնդում են, որ իրավաբանական անձը չի կարող օժտված լինել իրական կամքով, այսինքն՝ գործունակությամբ: Իսկապես, կազմակերպության կամքը և նպատակը մինչյանց պայմանավորող և առանձին-առանձին վերցրած էական նշանակություն ունեն իրավունքի սուրյեկտի համար, քանի որ առանց կամքի հնարավոր չէ հասնել նպատակին, իսկ առանց նպատակի չի կարելի որոշել սուրյեկտի կամքի ուղղվածությունը: Ինչպես «իրավաբանական անձ» կատեգորիան, այնպես էլ «իրավաբանական անձի կամք» հասկացությունը իրավական երևույթ է: Այդ առումով անժխտելի է, որ իրավաբանական անձի գործունեությունը կարող է կազմակերպվել քացառապես մարդու (մեկ կամ մի քանի) մասնակցությամբ: Կամքով օժտված են մարդիկ, որոնք ընդունակ են ներգործել

իրավաբանական անձի գործունեության վրա: Վերջին հաշվով հենց մարդկանց կամքն է, որից բխում է իրավաբանական անձի կամքը: Այդ կամքը որոշվում և ուղղորդվում է այն նպատակով, ինչի համար ստեղծվում է իրավաբանական անձը: Հետևաբար, լինելով իրավունքի սուրյեկտ՝ իրավաբանական անձն օժտված է նաև իրավասուրյեկտության մյուս բաղադրիչով, այսինքն՝ գործունակությամբ:

Ֆիզիկական անձի գործունակությունը, Օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, իր գործունակություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու քաղաքացու ունակությունն է: Իրավաբանական անձի գործունակության պաշտոնական հասկացությունը ՀՀ գործող քաղաքացիական օրենսդրությունում բացակայում է: Դա, երկի թե, պայմանավորված է նրանով, որ իրավաբանական անձի գործունակությունն իրականացվում է նրա մարմինների միջոցով, որոնք բաղկացած են մարդկանցից: Օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ստանձնում իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքին, այլ իրավական ակտերին ու նրա կանոնադրությանը համապատասխան: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական անձն իր մասնակիցների, ինչպես նաև ներկայացուցիչների միջոցով կարող է ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ և ստանձնել քաղաքացիական պարտականություններ (Օրենսգրքի 57-րդ հոդված 2-րդ կետ): ՍՊԸ-ն իր գործունակության ուժով կարող է իր գործողություններով ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ, ինքնուրույն իրականացնել ձեռք բերված իրավունքներն ու կատարել ստանձնած պարտականությունները և պատասխանատվություն կրել քաղաքացիական իրավախախոսումների համար, ինչն ուղղակիորեն բխում է Օրենսգրքի 60-րդ հոդվածի բռվանդակությունից: Գործունակությունը ՍՊԸ-ի կողմից սեփական գործողություններով իրավունակության իրականացման ունակությունն է:

Ի տարրերություն քաղաքացիների, որոնց գործունակությունը կախված է նրանց տարիքից, առողջական վիճակից, կենսակերպից և այլ գործուներից (Օրենսգրքի 29, 30, 32-րդ հոդվածներ): Իրավաբանական անձինք, անկախ իրենց իրավունակության ծավալից, ընդհանուր կանոնի համաձայն, ունեն հավասար գործունակություն:

Վ. Ա. Պլոտնիկովի կարծիքով. «Իրավաբանական անձը պետք է ունենալ լրիվ գործունակություն. նրա գործունակությունը չի կարելի սահմանափակել և իրավաբանական անձին հնարավոր չէ ճանաչել անգործունակ»: Իրավաբանական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ հեղինակի տեսանկյունը միանգամայն հիմնավոր է, քանի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որ իրենց հոգեկան վիճակի հետ կապված՝ անգործունակ կարող են ճանաչվել միայն քաղաքացիները: Ինչ վերաբերում է գործունակության սահմանափակմանը, ապա այդ հարցի շուրջ կատարենք դիտարկումներ:

Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը նշանակում են լուծարման հանձնաժողով /լուծարող/ և Օրենսգրքին համապատասխան սահմանում են լուծարման կարգն ու ժամկետները: Այդ նույն հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ նշանակման պահից լուծարման հանձնաժողովին անցնում են իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորությունները: Այսինքն՝ կառավարման մարմինների լիազորությունները լուծարման հանձնաժողովին են փոխանցվում ընկերության լուծարման մասին մասում տեղեկությունները հրապարակելու, պարտապաններին ի հայտ բերելու, նրանց նկատմամբ ընկերության ունեցած պահանջները բավարարելու և պարտատերերի պարտքերը նարելու, ընկերության գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու համար այն դեպքերում, եթե ընկերության դրամական միջոցները չեն բավարարում պարտատերերի պահանջները, սակայն ոչ երբեք այն գործունեությունն իրականացնելու, որի համար ընկերությունն իր ստեղծվելուց հետո ուներ համապատասխան իրավունակություն: Այսինքն՝ լուծարման հանձնաժողովը ընկերությունը լուծարելու կապակցությամբ օժտվում է միայն վերը նշված իրավունքներով: Դա բույլ է տալիս ասել, որ ընկերության կառավարման մարմինների լիազորությունների փոխանցումը ինչպես իրավունակությունը, այնպես էլ ընկերության գործունակությունը ևս սահմանափակվում է: Այլ կերպ ասած՝ այդ պահից սկսած ընկերությունը գործունակ է այնքանով, որքանով դա համապատասխանում է նրա իրավունակության բովանդակությանը:

Քաղաքացիական իրավունքի տեսության մեջ և տարրեր երկրներում այլ կերպ են դիտարկվում իրավասույթեկտուրյան, այսինքն՝ իրավունակության և գործունակության ծագման և դադարման պահերը: Մասնավորապես, Գերմանիայի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների իրավունակությունը և գործունակությունը կարող են ծագել տարրեր ժամանակներում: Գերմանիայում սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների միջև նախնական ընկերության պետական գրանցումը համարվում են սահմանափակ իրավունակ և գործունակ են դառնում նախնական ընկերությունների պետական գրանցումով²³: Նմանատիպ կարգ է սահմանված նաև Ֆինլանդիայի քաղաքացիական օրենսդրությամբ²⁴: Ստուգայի համապատությունում (Օրենսգրքի 56-րդ հոդվածի 3-րդ կետ) իրավաբանական անձը ստեղծված է համարվում նրա պե-

տական գրանցման պահից: Իսկապես, ընկերության իրավասույթեկտուրյունը, այսինքն՝ առանձին-առանձին վերցրած իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական գրանցման պահից: Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ստանում ինը այդ պահից, ինչն էլ խոսում է այն մասին, որ այդ պահից սկսած ընկերությունը ձեռք է բերում և իրավունակություն, և գործունակություն:

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած պետական գրանցման պահից: Շարադրանքից կարելի է հետևություն անել, որ կազմակերպության իրավասույթեկտուրյունը, այսինքն՝ իրավունակությունն ու գործունակությունը, դադարում են պետական գրանցման պահից:

Գիտնականների մեծ մասի կարծիքով իրավաբանական անձանց իրավունակությունը և գործունակությունը ծագում և դադարում են միաժամանակ:

Կ. Կ. Յահիկովի ամփոփակումը. «Իրավաբանական անձի իրավունակության ու գործունակության ծագման ու դադարման պահերը չեն կարող չհամընկնել»²⁶: Իսկապես, քանի որ իրավունակությունն ու գործունակությունը իրավաբանական անձի իրավասույթեկտուրյան տարրերն են, դրանց դիտարկումը ծագման կամ դադարման տարրեր պահերի առումով անհիմաստ է:

Վերոդիրյալն ամփոփելով՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները. ՄՊՀ-ի իրավունակությունը հատուկ բնույթի է, այսինքն՝ այն կարող է ստեղծվել գործունեության բազմաթիվ տեսակներով գրաղվելու, այդ բվում հատուկ բույլտվություն պահանջող գործունեության համար, սակայն գործունեության կոնկրետ տեսակ ընտրելով՝ այն կարող է գրաղվել միայն այդ գործունեությամբ և ունենալ միայն այնպիսի իրավունքներ և պարտականություններ, որոնք համապատասխանում են կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված նրա գործունեության առարկային:

ՄՊՀ-ն իր գործունակությունն իրականացնում է իր համապատասխան մարմինների միջոցով: Գործունակությունը, որպես իրավասույթեկտուրյան պարտադիր բաղադրիչ, բովանդակում է նաև ընկերության դելիկտառնակությունը: Լուծարային գործնաթացում գտնվելու կապակցությամբ ընկերության գործերի կառավարման լիազորությունները փոխանցվում են լուծարման հանձնաժողովին: Դա վկայում է այն մասին, որ ընկերության իրավունակությունը լուծարման գործնաթացում չի դադարում, այլ սահմանափակվում է: Դրան համապատասխան սահմանափակվում է նաև ընկերության գործունակությունը: Ընկերության իրավասույթեկտուրյունը, այսինքն՝ իրավունակությունը ու գործունակությունը, վերջնականապես դադարում են կազմակերպության դադարման մասին պետական գրանցում կատարելու պահից:

- ¹ Stiu Matuzov H. I. Субъективные права граждан СССР. Саратов. 1996; Воеводин Л. Д. Конституционные права и обязанности советских граждан. М., 1972; Веберс Я. Р. Правосубъектность граждан в советском гражданском праве. Рига. 1976.
- ² Stiu Суханов Е. А. Гражданское право. Т.1. М., 1998. С.114-116; Гражданское право, учебник под ред. Сергеева А. П., Толстого Ю. К . 6-е издание, Т.1. М., 2002. С. 108-114.
- ³ Stiu Веберс Я. Р. Правосубъектность граждан в советском гражданском праве. 1976. С. 24.
- ⁴ Stiu Толстой Ю. Л. 1959. С. 9.
- ⁵ Stiu Красавчиков О. А. Юридические факты в советском гражданском праве. С. 37-39.
- ⁶ Stiu Кротов М. В. Правоспособность и дееспособность. Гражданское право. Учебник под ред. Сергеева А. П., Толстого Ю. К . Т.1. М., 2002. С. 112.
- ⁷ Stiu Ем В. С. Понятие, содержание и виды гражданских правоотношений // Гражданское право. Учебник. Т.1. / Отв. Ред. Суханов Е. А. 3-е изд. М., 2004. С. 125-126.
- ⁸ Stiu Грось Л. Участие публично-правовых образований в отношениях собственности. Гражданско-правовые проблемы // Хозяйство и право. 2001. N 5. С. 33.
- ⁹ Stiu Суханов Е. А. Юридические лица как участники гражданских правоотношений//Гражданское право. Учебник / Отв. Ред. Суханов Е. А. Т.1. М., 1998. С. 189.
- ¹⁰ Stiu Синайский В. И. Русское гражданское право. М., 2002. С. 119-121.
- ¹¹ Stiu ՀԱՅՀ Քաղաքացիական օրենսդիրը: 04.06.1994, N 34:
- ¹² Stiu Мольков Ю. В. Гражданская правоспособность коммерческих организаций. Правовые проблемы. М., 1996. С. 60.
- ¹³ Stiu Тотьев К. Лицензирование по новым правилам //Хозяйство и право. 2001, N 12. С. 7.
- ¹⁴ Stiu Тосунян Г. Исключительная правоспособность банка //Хозяйство и право. 1999, N 5. С. 58.
- ¹⁵ Stiu Слугин А. А. Гражданская правосубъектность юридических лиц. М., 2001. С. 9.
- ¹⁶ Stiu Кряжевских К. П. Право оперативного управления и право хозяйственного ведения по российскому гражданскому праву. Дисс... канд. Юрид. Наук. М., 2003. С. 96-97.
- ¹⁷ Stiu Суханов Е. А. Гражданское право в 4-х томах. Т. 1, М., 2006. С. 237.
- ¹⁸ Stiu Рухтин С. Правоспособность юридического лица. Российская юстиция. 2001, N 7. С. 26-27.
- ¹⁹ Stiu «Հրապանական անկարգությունների մասին» ՀՀ օրենք//ՀՀՊՏ, 2003.11.12, 56/291/:
- ²⁰ Stiu Savigny F.-K. System des heutigen romischen Rechts. Bd. II. Berlin, 1840.
- ²¹ Stiu Шершеневич Г. Ф., Курс гражданского права. Тула, 2001. С. 125.
- ²² Stiu Плотников В. А. Неосторожность, как форма вины в гражданском праве. Дисс... канд. юрид. наук. М., 1993. С. 65.
- ²³ Stiu Козлова Н. В. Создание юридических лиц. Хозяйство и право. 2002, N 1. С. 109-110.
- ²⁴ Stiu Козлова Н. В. Правовое положение акционерных обществ и обществ с ограниченной ответственностью в Финляндии. 2001, N 10. С. 68-73.
- ²⁵ Stiu Козлова Н. В. Правосубъектность юридического лица. М., Статут. 2005. С. 36.
- ²⁶ Stiu Яичков К. К . Гражданское и торговое право капиталистических государств. М., 1996. С. 81.

РЕЗЮМЕ

Общество с ограниченной ответственностью в гражданских правоотношениях

В этой статье изучаются элементы правосубъектности обществ с ограниченной ответственностью, а именно правоспособность и дееспособность. В результате исследования сделаны следующие выводы. Общество с ограниченной ответственностью обладает специальной правоспособностью, т.е. оно может создаться с целью осуществления любого вида деятельности, в том числе видами деятельности для которых требуется специальное разрешение. Однако, выбирая конкретный вид деятельности, общество с ограниченной ответственностью может заниматься только той деятельностью и иметь исключительно такие права и обязанности, которые соответствуют установленной его уставом деятельности. В рамках исследуемой тематики автор пришел к выводу, что правоспособность и дееспособность общества с ограниченной ответственностью в процессе его ликвидации ограничиваются.

SUMMARY
Limited liability company in civil legal relationships

This article studies the legal competence and capability of enterprises with limited liability and makes the following conclusions. Enterprises with limited liability are characterized by a special legal capacity, i.e. such may be created to engage in various types of activity including those requiring special permission. But once choosing to engage in a concrete type of activity, they can engage only in that particular activity and have such rights and responsibilities that are in line with the activity laid down in their charter. Within the framework of the study, the researcher has concluded that the competence and capability of enterprises with limited liability become limited during their dissolution phase.